

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ի 2015 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐԱԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ  
ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3 հասցեում գրանցված անտառապահի տնակը՝ 274.48 քառ. մետր մակերեսով, 266 դրամ հաշվեկշռային արժեքով անշարժ գույքը (բնակելի տարածք) և անասնաշենքը՝ 51.04 քառ. մետր մակերեսով, 1632 դրամ հաշվեկշռային արժեքով անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրել այնտեղ 1988 թվականից բնակվող Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով՝ համաձայն հավելվածի:

3. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, եռամսյա ժամկետում սույն որոշման հավելվածում նշված անձանց հետ կնքել բնակելի տարածքների նվիրատվության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքի պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ նվիրատուների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐԱԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀԱՅԱՆՏԱՌ»  
 ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՏԱՌԱՊԱՀԻ  
 ՏՆԱԿՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ՝ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ  
 ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Նվիրառուների ազգանունը, անունը, հայրանունը	Բնակտարա- ծության հասցեն,	Անձնագրային տվյալները	Զբաղեցրած բնակելի տարածքի մակերեսը (քառ. մ)	Հաշվե- կշռային արժեքը (դրամ)	Սեփականու- թյան տեսակը	Բնակտարածութ- յան պատկա- նելությունը	Անասնաշենքի մակերեսը (քառ. մետր)	Սկզբնական արժեքը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
Նորա Մամիկոնի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	AN0726717 տրված՝ 26.11.13թ, 042-ի կողմից	274.48	266	Սեփակա- նության իրավունքով	«Հայանտառ» պե- տական ոչ առև- տրային կազմա- կերպություն	51.04	1632
Դավիթ Կալինինի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	AE0452950 տրված՝ 29.02.2000թ, 042-ի կողմից	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականու- թյուն	«Հայանտառ» պե- տական ոչ առև- տրային կազմա- կերպություն	51.04	1632
Հրանուշ Ոսուփի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ	AF0642652 տրված՝ 29.05.2003թ, 062-ի կողմից	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականու- թյուն	«Հայանտառ» պե- տական ոչ առև- տրային կազմա- կերպություն	51.04	1632

	փողոց, 3-րդ տուն							
Ասյա Դավիթի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	ARM0041202676 տրված՝ 19.08.2014թ, 042-ի կողմից	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականություն	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	51.04	1632
Հովսեփ Դավիթի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	ԱԱ234243 տրված՝ 29.02.2000թ.	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականություն	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	51.04	1632
Լիլիթ Դավիթի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	ԱԱ284406 տրված՝ 15.02.2001թ.	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականություն	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	51.04	1632
Կարեն Կալինինի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	AK0391341 տրված՝ 24.10.2013թ, 042-ի կողմից	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականություն	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	51.04	1632
Անահիտ Սերգեյի Բալյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	AN0689267 Տրված՝ 24.10.2013թ, 042- կողմից	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականություն	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	51.04	1632

Սասուն Կարենի Խալաթյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դպրաբակ համայնք, 3-րդ փողոց, 3-րդ տուն	AM0893770 տրված՝ 09.10.2012թ, 042-ի կողմից	274.48	266	Ընդհանուր համատեղ սեփականու թյուն	«Հայանտառ» պե- տական ոչ առև- տրային կազմա- կերպություն	51.04	1632
Ընդամենը			274.48	266			51.04	1632

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հիմնավորում

**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքում գտնվող «Հայանտառ» պետական ոչ առեվտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

**Անհրաժեշտությունը՝** Բազմանդամ, փախստական ընտանիքին սեփական բնակատեղի և գոյատևման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններով ապահովում:

**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝** «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո է գտնվում ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքի 3-րդ փողոց, 3 հասցեում գրանցված անտառապահի տնակը՝ 274.48 քառ. մետր մակերեսով և անասնաշենքը՝ 51.04 քառ. մետր մակերեսով: Դեռևս 1988 թվականից անտառապահի տնակը հատկացվել է Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված, փախստական Նորա Մամիկոնի Խալաթյանի բազմանդամ (9 անձ) ընտանիքին, որոնք մինչ օրս բնակվում են վերոնշյալ հասցեում: 27 տարի է ինչ նշված անտառապահի տնակը և կից օժանդակ կառույցը՝ անասնաշենքը, չեն ծառայում անտառային տնտեսության կարիքների համար և դրա անհրաժեշտությունը չկա:

**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝** Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած, սոցիալապես անապահով անձանց իրավունքների, սոցիալ-տնտեսական երաշխիքների ապահովում:

**Կարգավորման նպատակը և բնույթը՝** Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքի բնակիչ, փախստական Նորա Մամիկոնի Խալաթյանի բազմանդամ (9 անձ) ընտանիքը բնակվում է անտառտնտեսության անտառապահի նախկին տնակում, որը գտնվում է գյուղնատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո: Դիմումատուի ընտանիքը ցանկանում է սեփականաշնորհել վերոհիշյալ կացարանը (շինությունը): Սույն որոշումը հաստատվելով, աջակցություն կցուցաբերվի Ն.Խալաթյանին և

իր Բազմանդամ ընտանիքին ունենալ սեփական բնակատեղի և գոյատևման համար անհրաժեշտ շինություն (անասնաշենք):

**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք՝**  
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

**Ակնկալվող արդյունքը՝** Բազմանդամ, փախստական ընտանիքը կունենա սեփական բնակատեղի և աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ անասնաշենք:

## **Տեղեկանք**

**«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրաբակ համայնքում գտնվող «Հայանտառ» պետական ոչ առեվտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրաբակ համայնքում գտնվող «Հայանտառ» պետական ոչ առեվտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## **Տեղեկանք**

**«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրաբակ համայնքում գտնվող «Հայանտառ» պետական ոչ առեվտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրաբակ համայնքում գտնվող «Հայանտառ» պետական ոչ առեվտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական նվազեցում չի առաջանում: